Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 9-ի N 1755 - Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԷՆԴԵՄԻԿ ՁԿՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարման ենթակա միջոցառումների համառոտ նկարագիրը | Կատարման պատասխանատուն | Համակատարողը | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | Սևանա լճում ձկների արդյունագործական պաշարների ուսումնասիրություն | Սևանա լճում ձկների կենսաբանական չափանիշների որոշում և արդյունագործական պաշարների գնահատում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2011 թ. և շարունակական | ՀՀ պետական բյուջե՝ «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններե ծրագրի շրջանակներում |
| 2. | Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարների ուսումնասիրություն | Սևանա լճում խեցգետնի կենսաբանական չափանիշների որոշում և արդյունագործական պաշարների գնահատում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2011 թ. և շարունակական | |
| 3. | Ձկան պաշարների համալրում | արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2011 թ. և շարունակական | ՀՀ պետական բյուջե՝ ՄԺԾ-ի շրջանակներում իրականացվող ծրագիր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Սևանա լճում և ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների կենսաբանական հատկանիշների ուսումնասիրություն, բնական ձվադրավայրերի վիճակի հետազոտում՝ արգելավայրերի հիմնադրման հնարավորությունը պարզաբանելու նպատակով | Սևանա լճում և ջրհավաք ավազանի գետերում ձկնատեսակների և խեցգետնի մասին առկա գիտական տեղեկատվության հավաքում, վերլուծություն, ամփոփում: Գետերում ձկների բնական ձվադրավայրերի վիճակի գնահատում, դրանց վերականգնման միջազգային փորձի ուսումնասիրում, արգելավայրերի ստեղծման հնարավորությունների բացահայտում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2011 թ. և շարունակական | միջազգային ֆինանսավորման առկայության դեպքում |
| 5. | Սևանա լճում և ջրհավաք ավազանի գետերում ձկների կերային բազայի որոշում | Սևանա լճում և ջրհավաք ավազանի գետերում ձկների կերային բազայի (զոոպլանկտոն ու զոոբենթոս) որակական և քանակական զարգացման բացահայտում և արգասիքի որոշում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2011 թ. և շարունակական | միջազգային ֆինանսավորման առկայության դեպքում |
| 6. | Սևանա լճի ջրի որակի գնահատում՝ արժեքավոր և էնդեմիկ ձկնատեսակների կենսապայմանների ապահովման նպատակով | ջրի որակի փոփոխման մեխանիզմների և ազդող գործոնների բացահայտում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | 2012 թ. և շարունակական | միջազգային ֆինանսավորման առկայության դեպքում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | ՀՀ կառավարության 2009 թվականի հուվարի 22-ի նիստի «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմային հավանություն տալու մասինե N 3 արձանագրային որոշման 9-րդ կետի փոփոխություն | Սևանա լճի ավազանում նոր ՓՀԷԿ-երի կառուցման բացառում՝ Սևանի լիճ թափվող գետերի էկոլոգիական վիճակի բարելավման և ձկնաշխարհի վերականգնման համար | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2011 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ